ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 30-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը: Մասնակցում էին Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, նախարարներ, տարբեր գերատեսչությունների և ակադեմիական համակարգի ներկայացուցիչներ: Ներկաները մեկ րոպե լռությամբ հոտնկայս հարգեցին հաշվետու ժամանակաշրջանում կյանքից հեռացած ակադեմիկոսներ Լևոն Մկրտչյանի, Հովհաննես Բակլավաջյանի, Էդուարդ Աթայանի և թղթակից անդամ Լեոնիդ Հակոբյանի հիշատակը:

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը: Ամփոփելով ակադեմիայի հաշվետու տարվա գործունեության արդյունքները, պետք է նշել, ասաց նա, որ համակարգը թեև աշխատել է շարունակվող նյութական ծանր պայմաններում, սակայն գիտական հետազոտությունների ասպարեզում հասել է դրական որոշ տեղաշարժերի: Մեր ջանքերը նպաստակաուղղվել են գիտության զարգացման այն հիմնական ուղղությունների հստակ ուրվագծման համար, որոնք բխում են պետության տնտեսական զարգացման, ազգային անվտանգության շահերից: Գիտությունների ակադեմիան հիմնականում զբաղված է դիտական ներուժի և առկա ձեռքբերումների պահպանման խնդիրներով:

Ֆ. Սարգսյանը ներածական խոսքում ասաց, որ ակադեմիան զարգացրել է կապը տարբեր երկրների և առաջին հերթին Ռուսաստանի Դաշնության գիտական կենտրոնների հետ, որն էլ օգնում է մեր գիտության մակարդակի պահպանմանը, նրա միջազգային ճանաչմանը: Զգալի են կնքված պայմանագրերի, դրամաշնորհների, հովանավորների, հիմնադրումների ներդրումները գիտության ֆինանսավորման ասպարեզում: Շարունակվել են առաջնահերթ համարվող երկրի պաշտպանության խնդիրների, բարձր տեխնոլոգիաների, էներգիայի և վառելիքի նոր աղբյուրների, հանքահումքային պաշարների հետազոտման աշխատանքները, նոր աշխատատեղերի ստեղծման, շրջակա միջավայրի պահպանման, կենսատեխնոլոգիայի, ժառանգական հիվանդությունների, հայագիտության և հասարակական մյուս գիտությունների ուղղությամբ տարվող ուսումնասիրությունները: Հատուկ ընդգծվեց Սևանի պրոբլեմի հետ կապված աշխատանքների կարևորությունը:

Ակադեմիայի պրեզիդենտը ցավով նշեց, որ թեև հայտնի ճշմարտություն է, որ առանց գիտության չի կարող լինել պետություն և չի կարող զարգանալ հասարակությունը, սակայն այսօր էլ գիտության հեղինակությունը շարունակվում է մնալ ոչ արժանավայել բարձրության վրա, թեպետ մեծ է մեր գիտական ներուժը և պատիվ կարող է բերել շատ զարգացած երկրների: ԳԱԱ-ն ընդհանուր առմամբ ունի ավելի քան չորս հազար աշխատակից, սակայն միայն անցյալ տարվա ընթացքում այդ թիվը

նվաղել է ավելի քան չորս տասնյակով: Մեկնածների թվում քիչ չեն նրանք, որոնք արդեն իսկ որոշակի ներդրում են կատարել համապատասխան երկրների գիտության զարգացման գործընթացներում: Այս պայմաններում, ասաց Ֆ. Սարգսյանը, հարկ է որդեգրել գիտատեխնիկական քաղաքականության այնպիսի սկզբունքներ, որոնք նպաստեն գիտական ներուժի պահպանմանը, ստեղծել օրենսդրական և իրավական համապատասխան դաշտ և կյանքի կոչել ընձեռված հնարավորությունները:

Խոսելով 2000 թ. դեկտեմբերի 5-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով Գիտությունների ազգային ակադեմիային վերապահված իրավասությունների մասին, ակադեմիայի պրեզիդենտն ասաց, որ դրանք, ցավոք, լիարժեք չեն իրականացվում, թեև օրենքի ընդունումից անցել է ավելի քան մեկ տարի: Դեռևս ձևավորված չեն ենթաօրենսդրական այնպիսի ակտեր ու որոշումներ, որոնցով գիտական համակարգում հնարավոր լինի դրական լուրջ տեղաշարժել ակնկալել:

Ֆ. Սարգսյանն անդրադարձավ ակադեմիայում, բուհերում և ճյուղային նախարարությունների համակարգերում կուտակված գիտատեխնիկական ներուժի նպատակային և արդյունավետ օգտագործման կազմակերպմանը: Այս իմաստով, ասաց նա, նպատակահարմար է իրականացնել կառուցվածքային այնպիսի փոփոխություններ, որոնք առաջին հերթին նպաստեն կա՛մ կիրառական բնույթի ինստիտուտների միավորմանը համապատասխան արտադրական ձեռնարկությունների հետ՝ ստեղծելով ֆիրմաներ, կոնցեռներ կամ էլ պայմանագրային հիմունքներով դրանց համագործակցությանը:

Ակադեմիայի պրեզիդենտը խոսեց ծրագրային-նպատակային ֆինանսավորման, համակարգում լուրջ բարեփոխումների անհրաժեշտության, կիրառական հետաքրքրություն ներկայացնող հետազոտությունների լիարժեք գովազդի, մենեջմենթի կազմակերպման, գիտական ներուժի թարմացման և երիտասարդացման հարցերի մասին: Անիմաստ համարեց ակադեմիայի նախագահությանը զուգահեռ ունենալ ևս մեկ կառավարող մարմին՝ դա լինի նախարարություն կամ գերատեսչություն, նշեց, որ պետական մարմինները կոչված են հովանավորելու, այլ ոչ թե վարչական մեթոդներով գիտությունը կառավարելու: Ըստ Ֆ. Սարգսյանի, թվարկված խնդիրների ծանրությունը կարելի կլիներ թեթևացնել, եթե գտնվեր գիտական համակարգը նորովի ու ճիշտ կառավարելու եղանակը:

Վերջում ԳԱԱ պրեզիդենտը հայտնեց, որ, օգտվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով վերապահված իրավունքից, ակադեմիան պատրաստել է առաջարկությունների փաթեթ, որը կներկայացվի կառավարության քննարկմանը: Նա համակարգի գիտնականների անունից շնորհակալական խոսք ասաց գիտական աշխատանքների հովանավորների, մասնավորապես «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի և Հայ օգնության ֆոնդի մասին, համոզմունք հայտնեց, որ ակադեմիայի համակարգի աշխատողները, համապատասխան աջակցություն և օգնություն ակնկալելով կներդնեն ամեն ջանք ու եռանդ գիտական օջախի վաղեմի փառքը վերահաստատելու համար:

Տարեկան ընդհանուր ժողովի մասնակիցներին ողջունեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, նշեց, որ գիտության տարբեր բնագավառներում հայ գիտնականների ծանրակշիռ ներգրումն անժխտելի է: Անգամ ամենադժվարին ժամանակներում հայի մեջ վառ է եղել գիտության հանդեպ սերը: Մեր գիտական նվաճումների պատմությունը փառավոր էջեր է ունեցել: Ներկաներից յուրաքանչյուրը, շարունակեց նա, առավել խորամուխ է այդ նվաճումների էությանը, հասու դրանց կարևորությանը, առավել ծանոթ բազմամյա այն ավանդներին, որոնք ամրագրված են գիտության այս սուրբ կաճառում: Վերջում Ամենայն Հայոց կաթողիկոսն ասաց, որ մաղթում եմ այդ ամենը վերադառնա, այս շենքում կրկին տիրի աշխույժը:

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 2001 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ-ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանը: Նշելով, որ հաշվետու տարում ձեռք բերված գիտական հիմնական արդյունքները ներկայացված են հրատարակված «Հաշվետվության» մեջ, նա չանդրադարձավ դրանց, միայն տեղեկացրեց, որ 2001 թ. գիտական հետազոտություններ են կատարվել պետական բյուջեից ֆինանսավորվող 466 թեմաներով, հրատարակվել է ավելի քան 90 աշխատություն, 1332 գիտական հոդված է լույս տեսել հանրապետությունում, 850-ը՝ արտասահմանում: Արտասահմանյան երկրներ գործուղման են մեկնել համակարգի 299 գիտնականներ. այդ գործուղումները բավականաչափ արդյունավետ են եղել: Հաշվետու տարվա ընթացքում ակադեմիայի համակարգում աշխատանքի են ընդունվել 66 երիտասարդ մասնագետներ, ասպիրանտուրայում սովորող երիտասարդների թիվը հասել է 242-ի:

Այնուհետև Վ. Բ. Բարխուդարյանն անդրադարձավ ակադեմիական համակարգի ֆինանսական դժվարություններին, կադրերի արտահոսքի հետևանքով ստեղծված կացությանը, քննադատության ենթարկեց ազգային ակադեմիան և բարձրագույն ուսումնական հաստատությունները միավորելու մերթ ընդ մերթ հնչող գաղափարը:

ԳԱԱ փոխպրեզիդենտ-ակադեմիկոս-քարտուղարը նաև խոսեց հայագիտության բնագավառում տիրող անհանգստացնող վիճակի մասին, այն, որ չի համակարգվում Հայրենիքի և Սփյուռքի հայագետների գործունեությունը. ԳԱԱ հայագիտական ինստիտուտների մի մասը մոռացության են տվել գիտական բանավեճերը, ծանրակշիռ աշխատությունների լրջմիտ քննարկումները: Տուրք տալով ժամանակի ոգուն՝ նրանք գերազանցապես տարվել են հրատարակված գրքերի շնորհանդեսներով, հոբելյանական նստաշրջաններով:

Տարեկան ժողովում ելույթներ ունեցան ՀՀ տարածքային կառավարման և արտադրական ենթակառուցվածքները համակարգող նախարար Հ. Աբրահամյանը, առևտրի և տնտեսական զարգացման նախարար Կ. Ճշմարիտյանը, կրթության և դիտության նախարար Լ. Մկրտչյանը: Ողջունելով ժողովի մասնակիցներին, նրանք արեցին գործնական առաջարկություններ, հարցադրումներ, կարևորեցին դիտության դերը պետության մեջ:

Հաշվետու զեկուցման շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ակադեմիկոսներ Դ. Սեդրակյանը, Յու. Ալեքսանյանը, Կ. Ղարագյոզյանը, Ռ. Ղազարյանը, Հր. Սիմոնյանը, քիմիական գիտությունների դոկտոր Ա. Գևորգյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Եղիազարյանը:

Տարեկան ժողովի ավարտին հասարակական գիտությունների բնագավառի մի խումբ երիտասարդ դիտնականների հանձնվեցին մրցանակներ:

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում կային նաև կազմակերպական հարցեր: Հաշվի առնելով, որ ակադեմիայի կանոնադրությամբ ԳԱԱ փոխպրեզիդենտները չեն կարող իրենց աշխատանքը համատեղել բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարի պարտականությունների հետ, տարեկան ժողովի ավարտին կայացած ընտրությունների արդյունքում ԳԱԱ փոխպրեզիդենտներ ընտրվեցին ակադեմիկոսներ Է. Ս. Գարրիելյանը և Յու. Հ. Շուքուրյանը:

Ապրիլի 29-ին տեղի ունեցան Գիտությունների ազգային ակադեմիայի Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների, բնական գիտությունների, հումանիտար գիտությունների բաժանմունքների տարեկան ժողովներ: Բաժանմունքների 2001 թ. դիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները համապատասխանաբար ներկայացրեցին փոխպրեզիդենտ, բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս Յու. Հ. Շուքուրյանը, փոխպրեզիդենտ, բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս Է. Ս. Գարրիելյանը, փոխպրեզիդենտ, բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը:

Բաժանմունքներում զեկուցումների շուրջ ծավալվեցին 2001 թ. գործունեության արդյունքների աշխույժ քննարկումներ:

Բաժանմունքների տարեկան ժողովների օրակարգերում կային նաև կազմակերպական հարցեր: Նկատի ունենալով, որ ակադեմիայի կանոնադրությամբ բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարները չեն կարող իրենց աշխատանքները համատեղել ԳԱԱ փոխպրեզիդենտների պարտականությունների հետ, բաժանմունքներում տեղի ունեցան ակադեմիկոս-քարտուղարների ընտրություններ:

Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ԳԱԱ ակադեմիկոս Է. Մ. Ղազարյանը:

Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ԳԱԱ թղթակից անդամ Ա. Շահինյանը:

Հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ԳԱԱ ակադեմիկոս Հ. Ա. Ավետիսյանը:

ՀՀ ԳԱԱ բաժանմունքների ընդհանուր ժողովների կողմից ընտրված բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների վերոհիշյալ թեկնածությունները հաստատվեցին ապրիլի 30-ին տեղի ունեցած ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում: